ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2019 թվականի N:297-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 38 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՓԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 21-րդ ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Մարիա Կասյանի 2019 թվականի հունիսի 19-ի դիմումը, անհիմն համարելով Արփինե Նիկողոսյանի 2019 թվականի հունիսի 21-ի բացատրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Նիկողոսյանին հայտարարել նկատողություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Նիկողոսյանին՝

1) Հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի հունիսի 19-ի թիվ 37 հրամանը

ճանաչել անվավեր և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն:

2) Ապահովել դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է